

Always standing by our community



SINCE 1997

**Komitas.ca**

FUNERAL COMPLEX

T 514.331.0400

PRE-PLANNING WITH 0% INTEREST  
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

## ԱՍՏՈՒԾՈՅ ՎԵՀԱԳՈՅՆ ՊԱՐԳԵԻԸ

«Գոհուրիւն Աստուծոյ՝  
Իր անպատմելի պարգեւին համար»  
(Ք. Կր 9.15)

Այս մեծախորհուրդ տօնին եկէք գոհաբանական ու փառաբանական բառերով բանանք մեր սրտերը, օրհներգելու Տէրը:

«Օրհնութեան ե՛րգ երգեցէք Տիրոջ, դուք՝ ազգեր բոլոր,

Գովաբանեցէ՛ք զԱյն, դուք ժողովուրդներ բոլոր» (Սղ 117.1):

Մնաւ Արեգակն արդարութեան:

Մնաւ Իշխանը խաղաղութեան:

Մնաւ Հրեշտակը սիրոյ:

Այս հրաշալի Մտուցողով Աստուած իր ողորմութեան ձեռքերը բացաւ աղքատացած մարդկութեան:

Աստուած իր գթութեան ձեռքերը մեկնեց մոլորած, անդունդի եզրին կանգնած մարդկութեան:

Աստուած իր ողորմութեան եւ գթութեան դռները բացաւ ուղեկորոյս մարդկութեան առջեւ, իր Միածին Որդին զրկելով:

Մնաւ Փրկիչն ազգի մարդկան:

Երկու հազար տարիներ առաջ Բեթղեհէմ քաղաքին մէջ՝ պարզ, համեստ ու խոնարհ ծնունդ մը տեղի ունեցաւ. մտուրի մը մէջ բազմեցաւ Աստուածածնունդ Արքա-Մանուկը, որուն օրրանը միլիոնաւոր մարդոց սրտերը պիտի դառնար:

Յաւիտենական այս ծնունդը դարձաւ Յորդա-



նանեան մկրտութիւն՝ ապաշխարութեամբ մաքրութիւն:

Այս գերահրաշ ծնունդը դարձաւ աւետարանի բարոզ՝ արքայութեան կոչ:

Այս մարդահրաշ ծնունդը դարձաւ նուրբիւրումի ընդառաջում՝ աստուածային հրաւերին:

Այս աստուածահրաշ ծնունդը դարձաւ ընծայ համայն մարդկութեան:

Աստուծոյ Լոյսը Աշխարհ եկաւ:

Աստուածաբաժնի մարգարէին տեսիլքին լոյսն էր այս ծնունդը, որ ծագեցաւ, եւ մարդիկ ազանատես եղան անոր փայլքին ու փառքին. «Խաւարի մէջ քաղց ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, մահուան շուքին երկիրը ընակողներուն վրայ լոյս ծագեցաւ» (Ես 9.2): Խաւարի մէջ նստած մարդկութեան մեծագոյն ու ամենաթանկ նուէրը ուրիշ բան չի կրնար ըլլալ, եթէ ոչ միայն լոյսը. լոյսը նուէր է, նուէրը՝ լոյս:

Ինչպէս ամէն ծնունդ, Փրկչական Մտուցողն եւս ունեցաւ իրեն տրուած նուէրներ՝ մոգերու ձեռքով: Անոնք արեւելքէն եկան, լուսաւոր աստղի մը առաջնորդութեամբ, եւ հասան Բեթղեհէմ, երկրպագեցին եւ իրենց նուէրները ընծայեցին Յիսուս մանուկին:

Ի՞նչ կը նշանակէ նուէր: Աստուածաշնչական բացատրութեամբ կը նշանակէ՝ պատարագ, ընծայ. հին-կտակարանեան հասկացողութեամբ՝ զոհ, իսկ նոր-կտա-

կարանեան հասկացողութեամբ, անիկա անարիւն զոհն է, այս անգամ Աստուծոյ մարդուն տրուած, մարդէն՝ մարդուն, եւ վերադարձ ու փոխադարձ նուէր՝ մարդէն Աստուծոյ, մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի մարմնին ու արեան կենդանարար փրկագործութեամբ, որ իր լրումին կը հասնի Սուրբ Հաղորդութեան խորհուրդով:

Բայց ի՞նչ է նուէրը:

Պարզ բացատրութեամբ, որեւէ առիթով, անձի մը ընծայումը՝ զգացումներ մարմնաւորող նիւթականացած, տեսանելի իր մը: Առհասարակ բոլորս ալ կը սիրենք նուէր ստանալ, ոմանք կը սիրեն նուէր տալ, իսկ կան մարդիկ, որոնք ոչ կը սիրեն նուէր տալ, եւ ոչ ալ ստանալ:

Նուէր տալը սիրոյ արտայայտութիւն է: Մտուցող ուրախութեամբ եւ հաճոյքով նուէրներ կու տան իրենց զաւակներուն, եւ երջանկութեամբ կը դիտեն ու կը տեսնեն, թէ ինչպէս իրենց զաւակները ստացած նուէրներուն կը փութան, կը ստանան ու կը վայելեն, այնուհետ՝ զանոնք դարձնելով իրենց սեփականութիւնը, որոնց ստացումով անոնք ուրախութիւնը համբոյրով կ'արտայայտեն՝ կը փոխադարձեն:

Բոլորս ալ՝ մանուկ թէ մեծահասակ, շատ լաւ գիտենք թէ ով մեզի նուէր կու տայ, եւ միաժամանակ՝ ինչո՞ւ: Սակայն, յստակ կերպով կրնանք ըսել, որ նուէրի արժէքը կը բարձրանայ՝ երբ անիկա մտածուած նուէր է, այսինքն՝ երբ սէր, հոգածութիւն եւ գուրգուրանք, բայց մանաւանդ բարի նպատակ կայ կապուած այդ մատուցումը նուէրին:

Տակաւին, նուէրը՝ ինքզինք տալու, ինքզինք ընծայելու սիրոյ գերագոյն գրասերում է: Սուրբերը իրենց կեանքերը ընծայաբերած են Աստուծոյ, իրենց ունեցած գերագոյն սիրոյ իրքեւ արտայայտութիւն: Քաջերն ու հերոսները իրենց կեանքերը զոհաբերած են յանուն իրենց ազգին եւ եկեղեցւոյ, նոյն սիրոյ իրքեւ ճառագայթում: Ի վերջոյ, նուէրը սէր է եւ փոխադարձ սիրոյ վայելք: Ամէն նուէր իր գիրը ունի, ճրի նուէր չի կրնար ըլլալ:

Միայն Աստուծոյ սէրն է, որ ճրի է, եւ ճրիաբար կը արուի մարդուն: Աստուծոյ բարիքները անսահման են, եւ անոնք, որպէս պարգեւ կը արուին մարդուն: Աստուած ամէն ինչ տուաւ մարդուն, անոր հաւատաւոր ցանկութեան նայելով, անոր կարիքներուն ազանատես, անոր լուռ մրմունջներուն ունկնդիր: Տուաւ ջուր եւ մանանայ, հաց եւ գինի, տեսողութիւն եւ լսողութիւն, ոտքեր ու ձեռքեր՝ ամբողջական կեանք մը՝ ինքն իրմով եւ ուրիշներուն համար ապրելու:

Պօղոս Առաքեալ իր նամակին մէջ կ'ըսէ. «Աստուած որպէս ճրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու

Շար. էջ 10

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի



«Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութիւնն լոս անճակագմը, կը շնորհաւորորեն ձեր Նոր Տարին եւ Ս. Մուկնիկը, եւ այս առթիւ կ'նուրբնէ ձեզ տեղեկացնել, թէ՛ «Հորիզոն»-ի յառաջիկայ թիւը լոյս պիտի տեսնէ Չորեքշաբթի, 10 Յունուար 2018-ին: Առողջ եւ յաջող տարի մը բոլորին:

2017

# CR-V

STARTING FROM

## \$26,890\*



Image for illustration purposes only.

**HONDA**

**GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.  
Montréal-Nord, QC H1G 6C4

**514 327-7777**

www.hondagabriel.com

◀ OPEN SATURDAYS ▶

**Kevork Asadourian**  
**Vahan Vartanian**  
**Haig Khobasarian**



**HONDA**

\*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



**ARZ**  
fine foods

*Home to  
Authentic  
Mediterranean Gourmet*



# Ամանորին՝ Ձեր Սիրելիներուն Նուիրեցէք Հայ Վիրաւոր Ձինուորներու Առողջութիւնը



## ՄԱՍՆԱԿՑԵՑԷ՛Ք

Երեւանի «Հերացի» հիւանդանոցի վերականգնողական կեդրոնի ծախսերուն: «Աջակցութիւն վիրաւոր զինուորներին» կազմակերպութեան նախաձեռնութեամբ՝ այս նոր կեդրոնը հնարաւորութիւն կու տայ, որ վիրաւոր զինուորներուն վերականգնողական (rehabilitative) բուժումը սկսի անմիջապէս եւ կատարուի անվճար:

Ձեր նուիրներու նուիրագիրները ապահովեցէք դիմելով ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան, [heratsi.veterans@ayfcanada.org](mailto:heratsi.veterans@ayfcanada.org)  
Հեռ. +1 647-966-2281  
կամ հետեւեալ կայքէջին.  
[www.youcaring.com/heratsi-veterans](http://www.youcaring.com/heratsi-veterans)

«Աջակցութիւն վիրաւոր զինուորներին»ը ոչ-կառավարական կազմակերպութիւն է (Non-Governmental Organization (NGO)):  
<http://www.facebook.com/wounded.heroes/>



ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը կազմակերպէ «Նուիրագիր փոխան նուէրի» ծրագիրը, զօրակցելու վերականգնողական նոր կեդրոնի կառուցման աշխատանքներուն:

## ԻՄԱՍՏԱԴՈՐԵ՛ՆՔ ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐԸ՝ ԱՋԱԿՑԵԼՈՎ ՄԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԲՈՒԺՄԱՆ

Իբրեւ ծախսերուն մասնակից՝ պիտի ստանաք հետեւեալ նուիրագիրը, նուիրելու ձեր սիրելիներուն եւ բարեկամներուն:



**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**



13 Դեկտեմբեր 2017-ին Ս. Յակոբ Ազգային Վարժարանի ընդհանուր տնօրէնուհի տիկ. Լենա Գատեան յայտարարեց, թէ կրթական մարզին մէջ 32 տարիներու ծառայութենէ հետք, 2017-18 դպրոցական այս տարեշրջանի աւարտին հանգստեան պիտի կոչուի: Ան վերջին 7 տարիներուն ժրջանութեամբ վարած էր տնօրէնութեան իր պաշտօնը համայնքիս վերոյիշեալ վարժարանէն ներս:

Վարժարանիս Վարչական Խորհուրդը եւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը շնորհակալութիւն կը յայտնեն տիկ. Գատեանին՝ տարիներու իր նուիրումին համար եւ իրեն կը մաղթեն արեւշատ ու երկար կեանք: Մշակը իր հանգիստին արժանի է:

Հոգաբարձութիւն՝ Ս. Յակոբ Առաջնորդանիս Մայր Եկեղեցւոյ եւ Վարչական Խորհուրդի Ս. Յակոբ Ազգային Վարժարանի

**Տարեցներու միութեան շրջապտոյտը Գուլպա**

Կազմակերպութեամբ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Տարեցներու միութեան տեղի ունեցաւ շրջապտոյտ դէպքի Varadero, Cuba, Նոյեմբեր 28-էն 6 Դեկտեմբեր 2017-ին, Iberostar Bella Visita պանդոկին մէջ:

Մասնակցողները, թիւով 26, վայելցին գեղեցիկ եւ արեւոտ ծովեզերայ շրջանը, հաճելի, ուրախ, եւ ընկերային մթնոլորտի մը մէջ:

Ունեցանք շրջապտոյտ երկարկանի հանրակառքով Varadero քաղաքին մէջ եւ շրջակայքը: Փափաքողները առիթը ունեցան կատարելու զանազան գնումներ՝ յիշատակի նուէրներ, գուլպական Rum, Cigars եւ այլն:

Մասնակցող խումբէն ոմանք, թիւով 9, կատարեցին միօրեայ շրջապտոյտ մը դէպքի Գուլպայի մայրաքաղաք



Havana: Անոնք կրցան պատիլ, տեսնել եւ վայելել այդ պատմական քաղաքի զանազան տեսարժան վայրերը, շուկաները, նաեւ տեղեկութիւններ ստացան անոնց մշակոյթին, պատմութեան եւ անտեսութեան մասին:

Ունեցանք Rummy-ի մրցաշարք մը, որուն մասնակցեցան 12 հոգի: Առաջնութիւն չահող անձը ստացաւ շիշ մը գուլպական բարձրորակ Rum:

Ուրախալի էր նաեւ զուգադիպութիւնը մասնակցող զոյգի մը ամուսնութեան 55-րդ տարեդարձին: Բոլորը միատեղ տօնեցին եւ հաճելի ժամանակ անցուցին:

Մասնակցողները վայելելէ հետք ծովեզերայ գեղեցիկ բնութիւնն ու յիշատակելի ժամեր անցընելէ հետք՝ վերադարձան Մոնթրէալ:

**ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի փոքրիկներու Կադանդ**

Ամանորեան զանգերը կը հնչեն կրկին, փոքրերու երգերը կը բարձրանան ուժգին, պարելով ու երգելով կը հաուաքուրիք շուրջ բոլոր, կրկին դիմաւորելու Կադանդ Պապան՝ նուէրներով:

Ահա այսպէս փոքրիկները վայելցին ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի երիտասարդական յատուկ յանձնախումբին կողմէ կազմակերպուած Ամանորեայ ճոխ տօնակատարութիւնը. գունաւոր նախուէն զգեստներով փոքրիկները կը շնչեցնէին սրահ իրենց մանկական արտայայտութիւններով, երգերով ու պարերով եւ մանաւանդ հետեւող աչուկներով ու անմեղ շրթներով կը կրկնէին երգերը բոլորին սիրած մանկական երգերու մեկնաբան ժողովին հետ, որը մեծ խանդավառութիւն ստեղծեց



փոքրիկներուն մօտ.

Ապա ժամանակը հասած էր դիմաւորելու Կադանդ Պապուկը, որ մեծ սիրով ընդունուեցաւ բոլորին կողմէ. ոմանք լացին, ոմանք վախցան, բայց մեծամասնութիւնը մեծ ուրախութեամբ, մէկ առ մէկ մօտեցան երկար սպասուած Պապուկին եւ յիշատակի նկարներ ունեցան հետք. այդ միջոցին տեղի ունեցան նաեւ

խաղեր, ինչպէս նաեւ վիճակահանութիւն:

Փոքրիկներուն ուրախութիւնը անսահման էր տեսնելով այս ճոխութիւնն ու խանդավառութիւնը, առատ սեղանները, համեղ ուտեստեղէնը, գունազեղ ու հմայիչ զարդարանքները, չարածճիթովը, Կադանդ Պապուկին ու ժողովին երգն ու պարը:

Արփի Սանտեան

**Linda Kharaboyan** | Notaire Notary  
 Զեր Լուտարական և Իրաւաբանական Խաղցրն ու Ծրագիրները վստահեցեց մեզի  
 Vos affaires. À cœur.  
**Therrien Couture** | 3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com

**VIZUALIS** optométriste  
**DR SHANT DONABEDIAN**  
 Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire  
 514 695 2555 - VIZUALIS.CA

**PHOTO Cristal**  
 (514) 744 4313  
 Mariage - Portrait - Graduation  
 Restauration - Commercial - Passeport  
 Publicité - Lamination - Encadrement  
 Video - Reproduction  
 647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3  
 photocrystal@hotmail.com www.photocrystal.com

**Assura Bien inc.**  
 Cabinet en assurance de dommages et de services financiers  
 Ապահովագրական գրասենեակ  
**KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN**  
 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7  
 T: 514.903.3999

**RITA BAGHDASSARIAN**  
 Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager  
 COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CEL) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT  
 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8  
 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com

**TAXI MIRABEL**  
 450-430-2650  
 Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միքապէլ շրջանին մէջ: Հաճեցեք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:  
 Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

**RE/MAX** RE/MAX 3000 inc. Agence Immobilière  
**Elie Berberian**  
 Courtier immobilier | Real Estate Broker  
**C 514.519.3543 B 514.333.3000**

**ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN**  
 POSE D'ONGLES  
 RÉSINE ET POUFRE  
 MANICURE & PÉDICURE AVEC GEL  
 RECOUVREMENT SUR ONGLES NATURELS  
 Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL

**KRIKOR MAROUNIAN RLU**  
 Independent Financial Security Broker  
 Life Insurance • Disability & Critical Illness Insurance  
 Group Insurance • Pension Plans  
 Travel/Visitor Medical Insurance  
 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6  
 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666  
 krikormar@gmail.com

**FIVE STAR ELECTRIQUE** CINQ ÉTOILES  
 SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL  
**BEDROS NALPATIAN**  
 442, LA RIVIÈRE, LAVAL, QC.  
 TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997  
 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

**CENTUM™** Metrocap Wealth Solutions Inc. License # 12147  
 Mortgage programs for new comers to Canada  
 New purchases  
 Refinancing  
 Second mortgages  
 Self employed  
 Low credit score  
 Access to top lenders including private lenders  
**416.662.6650 cell**  
 centum.ca/sosie\_demersesian

**ALINE BEKEREJIAN**  
 NOTAIRE - NOTARY  
 180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5  
 T 514.382.7222 F 514.381.1818  
 aline.b@notarius.net www.abnotaires.com  
 Լուտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

### ԱՐՄԱՏՆԵՐՈՒ ԶԱՅՆԸ

Առանց չակերտներու գրի վերնագիրը, հակառակ որ Հայաստան համահայկական հիմնադրամի այս տարուան շքանշանը այդ անունը չակերտուած ներկայացուցած էր բնորոշելու համար իր ձեռնարկը, որ տեղի ունեցաւ 2 դեկտեմբեր 2017-ին, Լաւալի Centre Arménie կեդրոնին մէջ, որ սիրայօժար տրամադրուած էր այս նպատակին: Առանց չակերտի՝ որովհետեւ իրապէս այդ ձայնը լսուեցաւ ամբողջ երեկոյեան ընթացքին: Վերադարձ՝ արմատներուն:

Ինչպէս գիտել տուաւ իր բացման խօսքին մէջ Թովմաս Ֆուռնճեան՝ Հիմնադրամի Մոնթրէլի մասնաճիւղի նախագահը, այս տարուան ձեռնարկը, որ հացկերտութեամբ ձեւեր ստացած էր, նուիրուած էր այդ մասնաճիւղի 25-ամեակին: Նշենք, որ այս վերջինը կազմուած է Մոնթրէլի ու Լաւալի մէջ գործող 16 ազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն: Անցնող քառորդ դարու ընթացքին մասնաճիւղը յաջողած է 2 100 000 ամերիկեան տոլարի գումար մը հաւաքել ու հասցնել Հայաստանի ու Արցախի շինարարական աշխատանքներուն: Ան յոյս յայտնեց, որ այս տարուան հասցով կարելի պիտի ըլլայ փակել արդէն 2014-ին իրականացած՝ Խանձ գիւղի համայնքային կեդրոնի շինարարութեան մեր պարտքի բաժինը ու կարենալ որդեգրել նոր ծրագիր մը:

Պրն. Ֆուռնճեան նշեց նաեւ, որ այս երեկոյեան յաջողութիւնը կը պարտինք ամբողջովին նոր սերունդի

ներդրումին: Արդարեւ, ընդհանրապէս մեր վարժարաններու շրջանաւարտներէն բաղկացած էր կազմակերպիչ յանձնախումբը, ու մեծ մասամբ ալ երիտասարդներ էին ներկայ 450 հանդիսականները: Ան մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց յանձնախումբի անդամներուն եւ ի մասնաւորի անոր ատենապետուհիին՝ Թամար Փանոսեանին, որ նաեւ վարպետութիւն ու առինքնող կերպով կատարեց հանդիսավարութիւնը:

Առաջին հերթին հանդիսավարուհիին կարգաց ՀՀ դեսպան պրն Լեւոն Մարտիրոսեանի շնորհակալական գիրը, ապա անցաւ յայտագրի գործադրութեան:

Գեղարուեստական յայտագրին կարճ ելոյթներով իրենց մասնակցութիւնը բերին «Համագրային» ի Անի պարախումբէն մաս մը՝ Ճօ Աւագեանի եւ ՀԲԸՄ-ի «Գառնի» պարախումբի փոքրերը Լուսինի Բուլղատարեանի ղեկավարութեամբ:

Հայաստանէն յատկապէս հրաւիրուած երեք երգիչները՝ Սոնա Ռուբինեան, Աշուղ Նազելի եւ Սեւակ Ամրոյեան իրենց ժողովրդական, աշուղական եւ ազգային-հայրենասիրական երգերով ստեղծեցին բացառիկ շերտ ու խանդավառ մթնոլորտ մը, որ վարակեց բոլոր ներկաները: Արուեստագէտները արժանացան երկարատեւ ծափերու:

Աշուղ Նազելի գիտել տուաւ, որ թէեւ իրենք Հայաստանը բերած են մեզի, սակայն կ'անդրադառնան, թէ փոքր Հայաստան մըն ալ այստեղ կայ:



Մէջընդմէջ յայտարարուեցան կատարուող նուիրատուութիւնները: Տարուան ընթացքին ու ներկայ ձեռնարկով գոյացած գումարը անցաւ 60 հազար դանատական տոլարի սահմանները:

Հիմնադրամի ատենապետը իր շնորհակալութեան խօսքին մէջ հաստատեց, որ ներկաներու ջերմ վերաբերմունքը ցոյց կու տայ, թէ ծարաւ ենք արմատներու ձայնին, ու խոստացաւ յաջորդ տարի եւս նման ձեւով նշել Հիմնադրամի շքանշանը:

Շնորհակալութիւններ բոլոր աշխատողներուն: Վ.Ա.Ա.

### ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի տարեկան տօնավաճառը

Աւանդութիւն դարձած ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի 25-րդ տարեկան տօնավաճառին բացումը տեղի ունեցաւ Շաբաթ, 2 Դեկտեմբեր 2017-ին, Լաւալի Հայ կեդրոնի «Պարոնեան» սրահին մէջ:

Բացման հանդիսութեան ներկայ էին Ս. Գէորգ եկեղեցւոյ հովիւ հոգչ. Տէր Վարդան Վրդ. Թաշճեան, Քեպէզ նահանգի շրջանիս երեսփոխան պրն. Սոլ Փոլօ, Լաւալի քաղաքապետարանի անդամներ պրն. Արամ Էլակէօզ եւ Թիկ. Իգապէլլա Թասսօնի, ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան եւ ՀՅԴ «Ս. Զէյթիկեան» կոմիտէի անդամներ, ինչպէս նաեւ Ս. Գէորգ եկեղեցւոյ հոգաբարձութեան, ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի, Հայ Դատի խնամակալութեան եւ ՀՄԸՄ Լաւալի վարչութեան ներկայացուցիչները:

ՀՕՄ-ի ընկերուհիներուն կողմէ Գանատայի, Հայաստանի եւ ՀՕՄ-ի քայլերգներու երգեցողութիւնէն եւ հոգչ. Տէր Վարդան Վրդ. Թաշճեանի աղօթքէն ետք, ընկճ. Սեդա Գուշեան ֆրանսերէնով բարի գալուստ մաղթեց օտար հիւրերուն, որմէ ետք խօսք առաւ ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի ատենապետուհի ընկճ. Ազգանոյ Հատրտեան:

Ան իր բացման խօսքին մէջ, բարի գալուստ մաղթեց հիւրերուն եւ շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղի ժրջան անդամներուն, որոնք ամիսներ շարունակ աշխատեցան, որպէսզի այս տարեկան ձեռնարկը յաջողութեամբ պսակուի: Արդարեւ, ընկերուհիին շարունակեց իր խօսքը ըսելով. «Տօնավաճառը մասնաճիւղիս հաստատութեան ձեռնարկն է, որուն հասցով կարելի կ'ըլլան իրականացնել մեր կրթական, բարեսիրական եւ գանազան ձեռնարկները, եւ այս յաջողութեան գաղտնիքը ՀՕՄ-ի փոխանցած հաւատքն ու սէրն է, որ բոլոր դրած է անդամներուն եւ բարեկամներուն սրտին մէջ, դառնալով մղիչ ուժը անսակարկ նուիրումի»:

Ընկերուհի Հատրտեան իր խօսքին աւարտին ներկայացուց տօնավաճառի կիքամայր ընկճ. Արփի Եղգեան Քիւփէլեանը, որ Հալէպ ծնած է եւ յաճախած՝ Հայկական ազգ. վարժարանը, ապա Aleppo College-ը: 1993-ին անդամագրուելով ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղին, աշխոյժօրէն մասնակցած է ՀՕՄ-ի կազմակերպած ձեռնարկներուն եւ իր մասնակցութիւնը բերած՝ մասնաճիւղի գործունէութեանց:

Ընկճ. Արփի Քիւփէլեանի ժապաւէնի հատուժով



կատարուեցաւ բացումը տօնավաճառին, ուր կարելի էր գտնել ամանորեան հայկական անուշեղէններու, ճաշերու, զարդեղէններու, խաղալիքներու եւ այլ հետաքրքրական տաղաւարներ:

Երկու օրերու ընթացքին մեծ թիւով հայ թէ օտար այցելուներ ունեցաւ տօնավաճառը, ինչպէս նաեւ կիրակի օր՝ Գանատայի Դաշնակցային երեսփոխան պրն. Ֆայսալ Էլ Խուրին:

Վրէժուհի Տերվիշեան

CIBC Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com

Albert Arkilianian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilianian@sutton.com Cell: 514.962.8822

NISSAN GABRIEL VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS HONDA GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca

École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110

Natalie Skaff, CPA, CGA Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com

NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064

SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830


# Մեր Վտանգուած Գանձը՝ Արամի Տո՛ւնը

Ժամանակէ մը ի վեր, խոր մտահոգութեամբ կը հետեւինք «Հին Երեւան» անունը կրող շուկայական համալիրի ծրագրային կազմաւորման փուլերուն: Մեծածախս այս ծրագրին տէրերը հետեւողականօրէն կը պնդեն, որ հակառակ յաջորդական ձգձգումներուն՝ ծրագիրը կենդանի է եւ շուտով պիտի մտնէ շինարարական փուլ: Կիմանանք սակայն, որ դեռ հարցեր կան լուծուելիք, որոնց բնոյթը յայտնի չէ հանրութեան: Որմէ կը հետեւի, որ այս կէտին վրայ հանրութեան պարտաւորութիւնն է ըլլալ արթուն, աշալուրջ եւ ուշադիր, որպէսզի յանկարծ ծրագրի ներքին բանակցութիւններու քաջքուքին զոհ չհրթրայ մեր ազգային հարստութիւնը՝ Արամի Տո՛ւնը, որ ճակատագրի տխուր խաղով մը յայտնուած է «Հին Երեւան»ի սեփականատէրերու ափին մէջ, փոխանակ իր իսկական իրաւատիրոջ՝ ազգի՛ն օրինական սեփականութիւնը ըլլալու:

Կը խօսինք հայ անկախ պետականութեան ուս-վիրայ եւ հայ ժողովուրդի ազգային հերոս՝ Արամ Մանուկեանի մասին: Հերոս՝ որ իր հերոսի կոչումը չէ ստացած ժամանակաւոր որեւէ իշխանութեան պարգեւատրումներէն: Ան ՀԵՄՍ է իր իսկ ժողովուրդի անբեկանելի վճիռով: Ժողովուրդի ժամանակամերժ եւ գերօրինական հեղինակութեամբ: Անցնող հարիւր տարուան ընթացքին, Սփիւռքի մէջ, դժուար թէ գտնուէր մէկը, որ չզգիտնար, թէ ո՞վ էր Արամը: Արամը վաղուց «կորսնցուցած» էր իր ազգանունը: Ան պարզապէս ԱՐԱՄՆ էր հայ ազգի բոլոր իրերայաջորդ սերունդներուն համար եւ վե՛րջ: Իր անուամբ կոչուած են ընդհանրապէս Սփիւռքի մէջ հասակ առած բոլոր Արամները: Վստահաբար նաեւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը:

Սոր ցաւով պէտք է արձանագրել, որ դժբախտաբար նոյնը չէ եղած պարագան մեր հայրենիքին: Ինչ որ տեղ՝ բոլշեւիզմը կրցած է յաջողիլ հայրենի նորահաս սերունդներու մէկ լայն գանդուածի յիշողութեանէն ջնջել Արամին անունը եւ յատկապէս Արամի հայրենաստեղծ գործի տարողութեան յստակ գիտակցութիւնը: Բոլշեւիկեան իշխանութիւնները ըրած են ամէն բան մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեանէն ջնջելու Առաջին Հանրապետութեան հարազատ պատմութիւնը տեղի դնելով իրենց այլապէս նենգափոխութիւնը: Պատիւ մեր ժողովուրդին՝ որ այնուամենայնիւ մերժած է ընդունիլ այդ պարտագիրը զրկանքը եւ իր սրտի թաքուն խորքերուն մէջ պահած է իր սրբութիւնները: Այսօր այդ նոյն ժողովուրդին գաւազներն են, որ դրուագ առ դրուագ եւ մեծ նախանձախնդրութեամբ կը վերականգնեն մեր ազգային յիշողութիւնը:

Արամին ծննդավայրն է այժմու Սիւնեաց Մարզի Դաւիթ Բէկ գիւղը (նախապէս՝ Աէյվա): Ան ծնած է 1879ին: Եւ սակայն ան հասակ առած է Շուշիի մէջ եւ հոն է, որ անցած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը, երբ դեռ աշակերտ էր Շուշիի յայտնի թեմական Վարժարանին: Դեռ վաղ երիտասարդութեան տարիներուն, Արամ ցուցաբերած է ղեկավարելու բնածին շնորհներ եւ ունեցած է բեղուն յեղափոխական կեանք: 1904ին, ան կը նշանակուի ՀՅԴ Վանի ընդհատակեայ կազմակերպութեան պատասխանատու: Իսկ 1915ին, Արամ կեղերոնական դէմքն է Վանի հերոսական ինքնապաշտպանութեան, որ պսակուեցաւ վանեցիներու ջախջախիչ յաղթանակով: Ռուսական բանակին առնչութեամբ՝ հայ կամաւորական ուժերու Վան մուտքէն ետք, Արամ կը նշանակուի ազատագրուած մարզի կառավարիչ, իսկ երբ կը սկսի ռուսական նահանջը (որ բախտորոշ պիտի ըլլար Արեւմտեան Հայաստանի հայութեան համար), դարձեալ Արամն է, որ մեծ ձեռնհասութեամբ



կը ղեկավարէ քաղաքին պարպումն ու ժողովուրդի գանդուածային գաղթը դէպի Արարատեան Դաշտ: Կը տեղահանուի մօտ 200,000 մարդ եւ Արամն է, որ կը կազմակերպէ այդ տեղահան ժողովուրդին տեղաւորման գործը Երեւանի մէջ եւ այլուր: 1918ի մեծ քառօրէն մէջ՝ այս անգամ Երեւանի ժողովուրդի՛ն իսկ ընտրութեամբ՝ Արամ յանձն կ'առնէ շրջանի կառավարման դժուարին գործը: Եւ երբ թրքական զինեալ ուժերու յարձակողականը կը սկսի եւ թշնամին արդէն կը ծեծէ Երեւանի դռները, կրկին Արամն է, որ պիտի հրաշագործէ մեր ժողովուրդի համաժողովրդական հակադարձութիւնը յատկապէս Սարգարապատի եւ Բաշ Ապարանի յաղթական ճակատամարտերով: Պատմական այս մեծ իրադարձութիւններու բարդ բնոյթը իր էութեանէն զեղջելու որեւէ դիտաւորութիւն թող չվերագրուի մեզի: Մեծ թիւով հայրենանուէր զինուորներու, հրամանատարներու, զօրավարներու, աշխարհական եւ հոգեւոր գործիչներու արդար ներդրումը կայ այս բոլորին մէջ: Բայց այդ բոլորը ի մի բերող եւ զանոնք բուռնցքի վերածող կեղերոնական հեղինակութիւնն է Արամը իր ամբողջական նուիրումով, կազմակերպական իր հանճարով եւ իր անասման իմաստութեամբ:


Եւ ի՞նչ հեզանք եւ գաղափարական ի՞նչ թշուառութիւն՝ որ այսօր յանկարծ սկսած ենք սակարկութեան նիւթ դարձնել համազգային յարգանքի մեր բարոյական պարտաւորութիւնը Արամին եւ իր պատմական այս հսկայ ժառանգութեան հանդէպ: Որո՞նք են այն մարդիկ, որոնք կը մերժեն Հանրապետութեան Հրապարակը բացարտօրէն բանալ այս մեծ հայորդիին առջեւ: Որո՞նք են դարձեալ այս պարոնները, որոնք Հանրապետութեան չփոթ օրերուն քանի մը արծաթով եւ մէջէ-մէջ կարգադրութեամբ եւ գաղտագողի իւրացուցած են Առաջին Հանրապետութեան Կառավարութեան Տունը, որուն պատշգամբն Արամ դէպի Սարգարապատ մղած է Երեւանի ժողովուրդը: Ի՞նչ ամբարտաւանութեամբ անոնք ժպտած են խեղաթիւրել այս ազգային յուշարձանի ճարտարապետական յղացքը եւ ի՞նչ փրցուն շահամոլութեամբ զայն վերածած՝ փիցայարանի: Եւ ովքե՞ր են ի վերջոյ այն շուկայատէրերը, որոնք կը շարունակեն հանրութեան հետ վերաբերուիլ այնպէս որպէս թէ Արամի Տունը իրենց հօրենական սեփականութիւնը ըլլար, զոր կրնան այսօր ըստ կամս շահարկել կամ փճացնել, Ազգային ինքնագիտակցութեան ո՞ր նորմերով տեղի կ'ունենայ ազգային հարստութեան


այս բացայայտ ջարդը: Չի բաւեր, որ ազգային այս սրբավայրը խորհրդային իշխանութեան օրով լքուած ըլլայ իր բախտին, ահաւասիկ աւելի քան քառօրէ դարու մեր անկախ պետականութեան ղեկավար ուժերը բացարձակապէս ոչինչ ըրած են զայն հանրութեան թեւարկութեան տակ առնելու եւ զայն շարունակական քայքայումէ փրկելու: Մեր աչքերուն առջեւ ան անցած է ձեռքէ ձեռք որպէս սոսկ ապրանք ամէն օր աւելի ձեւագեղծուելով եւ աւերակի վերածուելով:

Այս ապաշնորհ գործընթացը պէտք է կանգ առնէ առանց այլեւայլի: Ծուռ դարձած այս անիւր պէտք է անյապաղ ետ շրջուի եւ Արամի Տունը վերադարձուի իր իսկական իրաւատիրոջ՝ հայ ժողովուրդի՛ն: Պետական կեանքի ճշգրիտ բառապաշարով՝ անոր իսկական տէրը հանրութիւնն է եւ այս մէկը այլընտրանք չունի: Ան չի կրնար ծախուիլ կամ գնուիլ կամ ձեւագեղծուիլ: Ծիշտ ինչպէս Միծեռնակաբերդն է կամ Սարգարապատի յուշահամալիրը: Աւելի ցնցի՛չ: Ծիշտ ինչպէս Ս. Հռիփսիմէի տաճարն է: Ան միանգամընդմիջտ պէտք է վերադարձուի հանրութեան եւ մշտնջենաւորուի ազգային հարստութեան իր վերջնական կարգավիճակով: Առաւել՝ ան պէտք է վերականգնուի իր սկզբնական ճարտարապետական յղացքով, իր ներքին ձեւաւորմամբ, իր պատշգամբներով ու բակով: Եւ ան պաշտօնապէս պէտք է մկրտուի որպէս մեր անկախ պետականութեան Հիմնադիր Հօր՝ Արամ Մանուկեանի Տուն-Թանգարանը: Եւ այս գործը խոնարհաբար պիտի առաջնորդէ ոչ այլ ոք, քան Հայաստանի Հանրապետութեան առաջին դէմքը՝ նորին գերագանցութիւն ՀՀ Նախագահը:

Քաղաքակիրթ ազգերը այսպէս է, որ կը զանազանուին միւսներէն: Անոնք կը յարգեն իրենց պատմութիւնը եւ գուրգուրանքով կը պահպանեն իրենց պատմական յիշողութիւնը: Արամի Տունը եւ Առաջին Հանրապետութեան Կառավարութեան Տունը իրենց պատերուն միջեւ կը պարփակեն մեր պատմական յիշողութիւնը: Անոնք կը պահպանեն յիշողութիւնը մեր այն պատմութեան, որ մեր ազգային անխառն հպարտութիւնն է այսօր եւ առողջ թթմորը մեր անկախ պետականութեան գաղափարին: Եւ անփիճելիօրէն՝ հանգանակը Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի մեր անժամանցելի պարտաւորութեան:


Կարօ Արմենեան

 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)

 ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՍԱՆԱՅԻՆ» ՄԱՍԵՎԵՐԻԻ «ՄՈՒՇԵՂ ԻՇԵԱԿՆ» ԳՐԱԴԱՐԱՆ

Այս տօնական օրերու նախօրեակին գրադարանի անձնակազմը կը շնորհաւորէ իր անդամ-անդամուհիներուն, նուիրատուներուն, ինչպէս նաեւ բարեկամներուն Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Այս առթիւ կ'ուզենք յիշեցնել, թէ Համազգայինի գրադարանը կը շարունակէ ընդունիլ հայերէն կամ օտար լեզուով հայկական նիւթեր բովանդակող գրքեր:



 2եր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

# Հնորհաւոր Նոր Տարի եւ Ա. Ծնունդ



**MARC  
DEMERS**

*Mayor of Laval*

**VASILIOS  
KARIDOGIANNIS**

*City councillor  
of L'Abord-à-Plouffe*

**ALINE  
DIB**

*City councillor  
of Saint-Martin*

**RAY  
KHALIL**

*City councillor  
of Sainte-Dorothée*

**SANDRA  
EL-HELOU**

*City councillor of  
Souvenir-Labelle*

**ARAM  
ELAGOZ**

*City councillor  
of Renaud*



**OFFICE OF THE CITY COUNCILLORS**

1, place du Souvenir, C.P. 422, Succ. Saint-Martin, Laval Qc H7V 3Z4

**MOUVEMENT LAVALLOIS  
ÉQUIPE MARC DEMERS**

# ANI

*Ristorante*

905.761.6484

1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5

## LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL



[www.aniristorante.ca](http://www.aniristorante.ca)

*Fine Dining*  
*Catering*  
*Party Room*  
FOR UP TO 35 PEOPLE



**RESTAURANT MAROUCH**  
Cuisine Libanaise - Déjeuner - Boulangerie  
514.623.5500 / 514.638.1670

Lebanese Breakfast  
Foul, Hommus, Awarma,  
Fattch, etc...



**Ծնորհաւոր  
Նոր Տարի եւ  
Ս. Ծնունդ**

Լաւագոյն Լիբանանեան  
ճաշարանը Լաւալի մէջ  
Հոյակապ նախաճաշ եւ  
սպասարկութիւն

For further information  
follow us on Facebook  
784 Curé-Labelle, Laval,  
QC H7V 2V3



Բարեկաջող Նոր Տարի եւ Ս. Ծնունդ  
կը մատթենք մեր յաճախորդներուն

**Service de traiteur  
Cuisine familiale  
armeno-libanaise**

Pour toutes vos occasions

appelez au  
**514.576.2999**

397 boul. des prairies laval



# JOUMMAR

## RESTAURANT

www.joummar.ca

COMING SOON IN MISSISSAUGA BY SAMAD IRAQI GROUP



1 HIGH MEADOW PLACE, UNIT 9, TORONTO, ONTARIO, M9L 2Z5 • Tel (416) 745-3111 • Fax (416) 745-9337

 noorfinefood



**Pharmacie  
Levon Benohanian et  
Mher Koubelian Inc.**  
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson  
Laval, QC H7W 2G1




T 450 688-4111  
F 450 681-5525  
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h  
Sam. et dim. : 9h à 17h  
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչեւ ձեր տունը.  
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.  
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)  
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում  
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝  
արեան բարակութեան (INR), շնչերակային  
ճնշման (tension artérielle), արեան շաքարի  
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի  
(cholesterol), եւն.



**VILLAGE GREC**



**Special of the day with coffee and dessert**  
Monday to Friday \$9.95 11am – 4pm  
Saturday and Sunday \$10.95 11am - 4pm  
**4491, boul. Samson, Chomedey, Laval**  
**Tel: 450 681-3333**

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm  
Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight

CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !  
KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!

### ՏԱՐԵՎԵՐԶԻ ԽՈՂԵՐ

#### Հարցումներ...

Հարցումներ...

Տարեկերը միշտ ալ առիթ կը հանդիսանայ, որ մենք մեզի հարց տանք, թէ ի՞նչ ըրինք, ի՞նչ իրագործեցինք, ի՞նչ յաջողեցանք փոխել, բարեփոխել մեր կեանքին մէջ, բայց մանաւանդ մեր շրջապատի կեանքին մէջ:

Այո, ամեն մէկս այս հարցումները կրնայ ինքն իրեն տալ, իր սեփական ապրած օրերուն կապակցութեամբ՝ կատարածին ու չկատարածին համար, եւ պատասխաններն ալ, եթէ գտաւ՝ առաւելաբար զինք պիտի հետաքրքրեն, զինք՝ իբր անհատ:

Բայց այս հարցումները մենք պարտաւոր ենք տալ նաեւ որպէս հաւաքակառուցութիւն, ամենէն փոքր տարողութեան հաւաքակառուցութեան՝ յանձնախումբերէ, մարմիններէ, կազմակերպութիւններէ, մինչեւ ամենէն մեծ տարողութեան հաւաքակառուցութիւնները՝ ընկերութիւն, կուսակցութիւն, եկեղեցի, կառավարութիւն, պետութիւն, ազգ:

Այդ հարցումները պիտի տան առաջին հերթին իրենք՝ այդ յանձնախումբերու, մարմիններու, կազմակերպութիւններու անդամները, այլեւ իշխանութիւններու մաս կազմող պաշտօնատարները, բայց նաեւ մենք բոլորս՝ որպէս բաղադրիչ մասնիկները ազգին, եթէ անշուշտ ունինք այդ ազգին պատկանելու գիտակցութիւնն ու յանձնառութիւնը:

Այդ հարցումները, ի հարկէ, ունին իրենց ենթաբաժանումները՝ ենթահարցումները, որոնք ինքնաբերաբար կը դրուին մեր առջեւ, երբ կը կատարենք տարեկան մեր այս ինքնաքննութիւնը: Այդ ենթահարցումները կը գոյանան թէ՛ հաւաքական եւ թէ՛ անհատական ինքնաորոգման մեր ճիգին մէջ: Անհատականները ձգելով իւրաքանչիւրին հայեցողութեան, քանի մանաւանդ չունիմ յատկապէս իրենց ընթացողներս քննութեան անցընելու..., մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք հաւաքական ինքնաքննութեան վրայ: Աւելցնեմ անմիջապէս, մեր հաւաքակառուցութիւնն ու անոր բաղկացուցիչ մեծ թէ փոքր տարրերը նոյնպէս հարցաքննութեան ենթարկել չէ՛ նպատակ: Պարզապէս կ'ուզեմ հրաւիրել բոլորը՝ մեր կեանքին մէջ դերակատար ազգայինները, որ Նոր տարին նոր թափով ու վերանորոգ ուժերով սկսելէ առաջ քիչ մը միասնաբար մտածենք այս բաներուն մասին:

Այսպէս, առաջին եւ ամենէն հիմնական հարցումը, որուն պիտի ուզէի, որ իւրաքանչիւրս փորձէ պատասխանել, այս է՝ Տարին սկսած ատեն գիտէի՞նք՝ ի՞նչ կ'ուզէինք իրագործել գալիք 365 օրերուն ընթացքին. ծրագիր մը կազմած էինք, այդ ծրագիրը իր բոլոր երեսներով քննած, վերլուծած ու հաստատած էինք, որպէսզի յստակ ըլլար մեր բռնելիք ճանապարհը: Ժամանակացոյց մըն ալ ունէի՞նք արդեօք:

Այդ ծրագիրը որքա՞ն կը պատշաճէր մեր պատկանած միութեան, կազմակերպ-

պութեան կամ թէկուզ իշխանութեան նպատակներուն: Բան մը կը փոխուէ՞ր, կը բարելաւուէ՞ր մեր ծրագրած աշխատանքներով. մեր ծրագրին ճամբով պիտի կարենայի՞նք սրբագրել ձախողութիւն մը, բուժել ախտ մը, վերցնել թերութիւն մը լրացնել պակաս մը:

Կը ծրագրուէ՞ր նոր ճիգ մը, նոր նկրտում մը, նոր մտայնում մը, բոլորովին նոր, աննախընթաց աշխատանք մը, թէ ոչ «այսպէս եկեր է, այսպէս ալ պիտի երթայ» հին այն համակերպական հոգեբանութեամբ պիտի սկսէինք Նոր տարին: Այսինքն՝ յանձնառու էինք իրապէս մէկ քայլ առաջ երթալու, մեր վիճակը բարելաւելու տագնապանքով՝ նոր բան մը փորձելու: Այսպէս մեր ըրածը պարզապէս «պարապ վախտի խաղալիք» չէ՞ր ըլլար, ու մենք մեր հասարակական պաշտօններուն վրայ ոչ թէ ծառայութեան, այլ պարզապէս ժամանցի եկած չէի՞նք ըլլար:

Մեր աշխատանքը իրապէս պիտի ծառայէ՞ր հաւաքակառուցութեան՝ համայնքին, գաղթօճախին, հայրենիքին կամ ազգին բարօրութեան, բան մը դրական կերպով պիտի փոխէ՞ր անոնց կեանքին մէջ, մեր կեանքին մէջ:

Մեր ընելիքը բան մը պիտի աւելցնէ՞ր մեր մշակութի գանձարանին մէջ՝ կաթիլ մը իւզ՝ Լուսաւորչի կանթեղին մէջ, պիտի նպաստէ՞ր նուազագոյն չափով մը իսկ մեր Դատի հանգուցալուծման, պիտի բազմապատկուէ՞ր մեր լեզուի իմացութիւնը, աւելի պիտի ամրացնէ՞ր մեր գոյութեան կուռնները, մեր հայրենի սահմանները:

Մտաբարձ էինք ինչպէ՞ս ներգրաւել երիտասարդութիւնն ու երիտասարդացնել մեր շարքերը, ինչպէ՞ս ամրապնդել ազգային հպարտութիւնը, — ո՛չ սնապարծութիւնը, ո՛չ յիստորտանքը, — ինչպէ՞ս պատրաստել մեզի յաջորդելիք ղեկավարները:

Եթէ այս բոլորը անցեալ տարեկերը մեր ուշադրութեան առարկան չէին եղած, վերջին հարցումս սա պիտի ըլլայ — Պատրաստ ենք գէթ այս գալիք տարուան համար մտածել այս բաներուն մասին:

Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

ՎԻԵՎ-ԱՐՄԷՆ

<p>Այցելեցեք <a href="http://hitunes.ca">hitunes.ca</a> կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը</p> <p><b>HITUNES.CA</b></p>	<p>Ունկնդրեցեք <a href="http://triktrak.ca">triktrak.ca</a> կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ</p> <p><b>TRIKTRAK.CA</b></p>
---	--

**«Հայ Դորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝**

<p><b>Videotron:</b> HD616 կամ SD16</p> <p><b>Bell Fibe:</b> HD1216 կամ SD216</p>	<p>Շաբաթ-առաւօտեան ժամը 8:30-ին (առաջին սիթուս)</p> <p>Հինգշաբթի- երեկոյեան ժամը 8:30-ին</p> <p>Ուղիղ արձակում <a href="http://www.icitelevision">www.icitelevision</a></p>
---	---

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»  
"ARAM AND SETA SEMERDJIAN FAMILY FOUNDATION"

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի տնօրէնութիւնը կը տեղեկացնէ, թէ 2016-2017 ուսումնական տարեշրջանին Քեպէզ նահանգէն ներս հովանաւորած եւ կրթաթոշակ յատկացուցած է եօթ (7) արժանաւոր ուսանողներու:

Այժմ՝ երրորդ անգամ ըլլալով, «ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի տնօրէնութիւնը կը յայտարարէ, թէ արդէն կ'ընդունի արժանաւոր թեկնածուներու դիմումները 2017-2018 ուսումնական տարեշրջանին համար:

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի տնօրէնութիւնը կրթաթոշակ պիտի յատկացնէ այն ուսանող(ուհի)ներուն, որոնք Քեպէզ նահանգի համալսարաններէն մէկուն մէջ արդէն կը հետեւին Առողջապահական եւ կամ Կիրառական Գիտութեանց ճիւղերուն (Specifically be pursuing their education in the fields of Health Sciences or Pure and Applied Sciences)

Դիմումագրեր ստանալու համար կապուիլ հիմնադրամի էլ-նամակի հասցէին [semerdjianfund@gmail.com](mailto:semerdjianfund@gmail.com)

**ԴԻՄՈՒՄՆԱԳՐԻ ՅԱՆՁՆՈՒՄԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԺԱՄԿԷՏ՝ 28 ՓԵՏՐՈՒԱՐ 2018**

2017-11-26



**ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԵԶԸ՝ ԶՄՐԱՆ**

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ 90% -Ը ՆԵՐՎՈՒԵՂ ԵՆ, ՄԻՆՉ ԱՄՐԱՆ ԳԻՆԵՐՈՒՆ՝ 50%-Ը**

ԶԵՂԻ ՕՐԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 26-ԻՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԵԶԸ ՅՈՒՆՈՒՐ 1 2018-ԻՆ ՓՈԿ Է

<p>ՀՐԱՄԵՑԷՔ, ՍԱՀՔԻ ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ ԵՒ ՍՏՈՂԵՑԷՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՄԵՐ ԽՍՐԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՑԵՆՈՎ</p>	<p>ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԴՈՒՐՍՆ ԵՆ, ԿԱՄ ԱՆ ԱՆՊԱՏ ԶԵՆՈՒՑՈՒԿ ՏԱՂԱՎՈՐՆԵՐՈՒ ՄԷՋ</p>
---	---

★ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԵԶԻՆ ԶԵՂԻ ՕՐԸ Է ԴԵԿՏԵՄԲԵՐ 26-Ն ԱՌՑԱՆՑ ԿՐՆԱԶ ՏԵՂԵԿԱ ԸՆԱԿ ՄԵՐ ԶԵՂՉԵՐԻՆ

**ZOOG GRANBY**

# Ազգային Ընդհանուր Ժողովը Կը Քննարկէ Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Եւ Քաղաքական Ժողովներու Գործունէութիւնը

Դեկտեմբեր 4ի առաւօտեան, նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Վեհաբանի դահլիճին մէջ ընթացք առաւ Ազգային Ընդհանուր ժողովը, որ պիտի տեւէ մինչեւ Ուրբաթ, Դեկտեմբեր 8: Քառօրեայ ժողովին կը մասնակցեցան թեմակալ առաջնորդներ, շուրջ հարիւր պատգամաւորներ եւ յատուկ հրաւիրեալներ:

Բացման նիստին իր հայրապետական պատգամը փոխանցեց վեհափառ հայրապետը, որ առաջին հերթին դիտել տուաւ, թէ սոյն ժողովը կենդանի վկայութիւն մըն է հայ եկեղեցւոյ հարազատ դիմագիծին, որ յատկանշական է հայկական եկեղեցիին՝ ժողովուրդին եկեղեցի ըլլալուն մէջ. «Առ այդ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կը բնորոշուի որպէս հաւատքի, առաքելութեան եւ ազգային ծառայութեան եկեղեցի», նշեց հայրապետը, շարունակելով, որ պատմութեան ընթացքին հայ եկեղեցին կանգուն մնացած է փոթորիկներուն դիմաց, որովհետեւ հաւատարիմ եղած է երկնային ճշմարտութիւններն ու արժէքները աշխարհ տանելու եւ ժողովուրդին ծառայելու քրիստոսատուր պատգամին:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր ժողովի բացման նիստէն ետք, յաջորդական 5 նիստերու վրայ ներկայացուցան Ազգային Կեդրոնական վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովներու քառամեայ գործունէութեան տեղեկագիրները՝ տեսերիզի ճամբով, ապա տեղի ունեցան քննարկումներ:

Կրօնական ժողովի տեղեկագիրին մէջ մեծ տեղ գրաւած էին Դպրեվանքին աշխատանքները, որոնք առնչուած էին առաւելաբար Դպրեվանքը ժողովուրդին տանելու ու գայն հարազատօրէն ներկայացնելու ճիգին: Անդրադարձ կատարուեցաւ եկեղեցին ժողովուրդին տանող այլ ծիրերու, ինչպէս Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքին՝ իր դասախօսական-լսարանային ձեռնարկներով, սեմինարներով, լսարաններով, ուխտերթերով եւ այլ աշխատանքներով, եւ Կիրակնօրեայ վարժարաններու բաժանմունքին ու Կրօնական եւ Դաստիարակական հրատարակութիւններու բաժանմունքին:

Նկատի ունենալով Արամ Ա. կաթողիկոսին գուրգուրանքը՝ երիտասարդ մարդուժը եկեղեցւոյ շուրջ համախմբելու եւ անոնց ձայն ու գործ տալու հրամայականին, տեղեկագիրը մանրամասն անդրադարձաւ երիտասարդական բաժանմունքին, եկեղեցւոյ շուրջ հաւաքուած ուսանողութեան՝ Հայ եկեղեցւոյ համալսարանական ուսանողներու միութեան (ՀԵՀՈՄ) եւ Հայ համալսարանականներու համախմբումին (ՀՀՀ): Տեղեկագիրը նշեց, որ այս բաժանմունքներու նախկին եւ ներկայ անդամներ ներկայիս կը գտնուին միջկեղեցական ու միջկրօնական պաշտօններու վրայ:

Տեղեկագիրը խօսեցաւ նաեւ Քահանայից պատրաստութեան բաժանմունքին, քրիստոնէական առաքելական հոգեւոր շարժումներու հետ գործակցութեան, նուիրապետական ամբողջութեան հետ յարաբերութիւններուն, միջկեղեցական ու միջկրօնական շարժումներու մէջ հայ եկեղեցւոյ մասնակցութեան, Եպիսկոպոսական ժողովին, Ցեղասպանութեան նահատակներու սրբադասումին, Սրբալոյս Միւլուսի օրհնութեան, միաբանութեան, «Շնորհալի» երգչախումբի աշխատանքներուն եւ Հայոց Ցեղասպանութեան որբերու «Արամ Պէղիբեան» թանգարանին մասին:

Յաջորդ նիստով, Ազգային ընդհանուր ժողովի Քաղաքական ժողովը

ներկայացուց իր քառամեայ տեղեկագիրը: Այս տեղեկագիրը նշեց, որ կաթողիկոսին նախորդ Ազգային ընդհանուր ժողովին պատգամած՝ Ափուռքի վերակազմաւորման հրամայականը ձեւ ու մարմին սկսած է ստանալու: Այս իմաստով, կաթողիկոսը իր գահակալութեան 20ամեակին աւիթով կատարած է հովուապետական այցելութիւններ, որոնք կաթողիկոսարան-թեմ գործակցութեան կարեւոր տարածքներէն մէկը հանդիսացած են: Տեղեկագիրը խօսեցաւ նաեւ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեանց համատեղ ձեռնարկներուն եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ Հայաստանի Հանրապետութեան ու Արցախի Հանրապետութեան հետ յարաբերութեանց մասին: Այս վերջինին ծիրին մէջ կ'իյնայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ձեռնարկած «Նոր Կիլիկիա» գիւղի շինութիւնը:

Տեղեկագիրը ներկայացուց նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան բացած Սիսի պատմական Աթոռին վերադարձի դատը, որուն մասին մանրամասն քննարկում պիտի ըլլայ ժողովին յատուկ մէկ նիստով:

Խօսելով շինարարական աշխատանքներու մասին՝ տեղեկագիրը լայն անդրադարձ կատարեց Սուրբոյ Հայ գաղթի վերականգնման աշխատանքներուն: Այս առնչութեամբ յատուկ նիստով ելոյթ ունեցաւ Բերիոյ թեմի առաջնորդ Շահան արք. Սարգիսեան, որ առաջին հերթին ներկայացուց Սուրբոյ Հայոցութեան իրավիճակը, ինչպէս նաեւ իրավիճակին հոյովոյթը եւ Սուրբոյ Հայոցութեան վերականգնման ծրագիրները: Սրբազանը յայտնեց, թէ վերականգնումի եւ վերաշինութեան աշխատանքները տեղի կ'ունենան ըստ առաջնահերթութիւններու եւ առաւելաբար փոքր ու միջին «պիղծներ»ներու բարելաման, որպէսզի սուրիական ընտանիքները կարենան ինքնաբաւ գոյատեւել Սուրբոյ մէջ: Սրբազանը ըսաւ, որ շնորհիւ շտապ օգնութիւններուն, նիւթական օժանդակութիւններուն եւ բարոյական աջակցութիւններուն՝ սուրիական թիւերը անտէր չէ գազացած, հակառակ դժուարին պայմաններուն: Ան նշեց, որ կաթողիկոսին Սուրիա տուած այցելութիւնները, ինչպէս նաեւ կաթողիկոսութեան յարկին տակ ծրագրուած վերականգնումի ծրագիրները, Սուրբոյ ժողովուրդի գաւազներուն յոյս եւ կորով տուած են գոյատեւելու:

### Քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութիւն

«Քրիստոնէական դաստիարակութիւն» նիւթով նիստին զեկոյցներ ունեցան Լիբանանի թեմէն Ժանի Դանիէլեան, Թեհրանի թեմէն Անի Քրիսթի սարկաւազուհի Մանուէլեան եւ Բերիոյ թեմէն Տաթև Ա. քահ. Միքայէլեան:

Յաջորդ նիստը յատկացուած էր «Հայեցի դաստիարակութիւն» նիւթին. զեկոյցեցին Գանատայի թեմէն Մհեր Գարաբազեան, Կիպրոսի թեմէն Վարդան Թաշճեան, Ատրպատականի թեմէն Անահիտ Յակոբեան եւ Քուէյթի թեմէն Ծորճ Արապաթեան:

Ազգային ընդհանուր ժողովը յատուկ նիստով մը ժողովականներուն տրամադրութեան տակ դրաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ձեռնարկած՝ հայ ժողովուրդի իրաւունքներու հետապնդման աշխատանքները, որոնց շարքին՝ Սիսի կաթողիկոսարանի դատին մանրամասնութիւնները:

Զեկոյցներ ներկայացուցին՝ գոկտ. Նորա Պայրազտարեան, Սեդա Խորշեան եւ Գանատայէն տեսերիզով միացաւ դատի գլխաւոր փաստաբան փրոֆ. Փա-



յամ Ախաւան:

Ազգային ընդհանուր ժողովի ծիրին մէջ նիստ մը յատկացուեցաւ սփուռքին, նոր մարտահրաւիրներու դիմաց՝ անոր վերակազմակերպման, ինքնութեան ամրապնդման եւ Հայաստանի հետ գործակցութեան: Յակոբ Բագրատունի (Լիբանանէն), Միհրան Բիւր-տոյլեան (Յունաստանէն) եւ Տարօն Տէր Խաչատուրեան (Միացեալ Նահանգներէն) այս նիստին զեկոյցաբերներն էին:

Իր օրակարգերու աւարտին, ժողովը ընթացեց անկէ բխած բանաձեւերը, կատարեց անոնց քննարկումը եւ ստացաւ առաջնորդարաններէն եւ ժողովէն եկած առաջարկներ: Ապա տեղի ունեցաւ ընտրութիւնը Կեդրոնական վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովներուն:

Եզրափակելով ժողովը՝ իր հայրապետական խօսքին մէջ Արամ Ա. կաթողիկոս բարձր գնահատեց ժողովին ընթացքը եւ վստահեցուց, թէ յառաջիկայ չորս տարիներուն Կրօնական եւ Քաղաքական ժողովները ջանք պիտի չխնայեն ծառայելու ազգին: Ան նշեց, որ ժողովը քննարկումներու ճամբով լուրջ մտահոգութիւններ արծարծած է, ինչ որ նոր ծրագիրներու մշակման մղիչ ուժ պիտի հանդիսանայ: Վեհափառը յիշեցուց նորընտիր ժողովներուն, թէ կաթողիկոսութեան աշխատանքները համայն հայութեան համար են եւ անոր համար հարկ է թափ տալ թեմերու վերակազմաւորման ու նոր որակով պարուրել աշխատանքները, ինչպէս նաեւ յառաջացնել կաթողիկոսութիւն-թեմեր գործակցութեան նորարար միջոցներ: Հայրապետը առաջնահերթութիւն նկատեց Սուրբոյ Հայոցութեան վերականգնումը կատարել ծրագիրներու ճամբով ու աւարտեց իր խօսքը ըսելով, որ «հայ ժողովուրդը կաթողիկոսութեան կիզակէտն է եւ ոչ՝ լուսանցքային. մեկնելով հայ ազգի գերագոյն շահերէն՝ համահայկական մօտեցումով ըսելիք ու ընելիք ունի Ա. Աթոռը»:

«Մեր առաքելութիւնը վերանորոգ հաւատքով, յոյսով ու տեսիլքով պիտի շարունակենք: Այդ տեսիլք մեր հայրենիքին, եկեղեցւոյ ու միութեան հզօրացումն է, մեր եկեղեցւոյ ծառայական առաքելութեան առաւել աշխուժացումն է: Այս բոլորը մենք միասնաբար պիտի կատարենք. ձեր մասնակցութիւնը մեր հաւաքական աշխատանքին շատ կարեւոր է», եզրափակեց հայրապետը:

Ստորեւ կը ներկայացնենք Ազգային Կեդրոնական նորընտիր վարչութիւնը (Դեկտեմբեր 8, 2017).

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ  
Կոմիտաս արք. Օհանեան, Օշական արք. Զօրոյան, Վարուժան արք. Հերկեհեան, Սեպուհ արք. Սարգիսեան, Մուշեղ արք. Մարտիրոսեան, Գեղամ արք. Խա-

չերեան, Նարեկ արք. Ալեմէմէզեան, Խորէն արք. Տողրամաճեան, Շահան արք. Սարգիսեան, Բարգէն արք. Չարեան, Շահէ եպս. Փանոսեան, Մեղրիկ եպս. Բարիբեան, Գրիգոր եպս. Չիֆթճեան, Վաղինակ Մ. վրդ. Մելոյեան, Մեսրոպ Մ. վրդ. Սարգիսեան, Պօղոս վրդ. Թինքճեան եւ Պետրոս վրդ. Մանուէլեան:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Դոկտ. Նորա Պայրազտարեան-Գալազեան (Պէյրութ), Սեդա Մարկոսեան-Խորշեան (Պէյրութ), Տիգրան Ճինպաչեան (Պէյրութ), Ստեփան Տէր Պետրոսեան (Պէյրութ), Վրէժ Սապունճեան (Պէյրութ), Յակոբ Եափուճեան (Պէյրութ), Արթուր Նազարեան (Պէյրութ), Աւետիս Կիտանեան (Պէյրութ), Յակոբ Գրլպաչեան (Պէյրութ), Վահէ Ղազարեան (Հալէպ), տղթ. Արմէն Տէրեան (Աթէնք), Թովմաս Թովմասեան (Թեհրան), Վահէ Եազուպեան (Լոս Անճելըս), Կայծակ Չէյթլեան (Լոս Անճելըս), տղթ. Տրդատ Մանկիկեան (Ուաշինկթըն), տղթ. Ժիրայր Պամաճեան (Մոնթրէալ, Գանատա) եւ Գրիգոր Մահապէրճեան (Ապու Տապի):

### Ազգային Ընդհանուր Ժողովի Պատուիրակութիւնը Այցելեց Լիբանանի Հանրապետութեան Նախագահին

7 դեկտեմբեր 2017-ի առաւօտեան, Արամ Ա. վեհափառ հայրապետը Լիբանանի Հանրապետութեան նախագահին տուած այցելութեան ընթացքին, նախագահին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային ընդհանուր ժողովը ներկայացնող պատուիրակութեան առջեւ անդրադառնալով Միացեալ Նահանգներու նախագահին յայտարարութեան, մերժեց Երուսաղէմը Իսրայէլի մայրաքաղաք նկատող Միացեալ Նահանգներու մօտեցումը, որ չի համապատասխաներ միջազգային օրէնքի արգարութեան ու պատմական իրողութեան: Միաժամանակ, վեհափառ հայրապետը շեշտեց, որ Երուսաղէմը պէտք է մնայ բաց քաղաք միաստուածեան երեք կրօններուն առջեւ՝ հրէական, քրիստոնէական ու իսլամական, եւ յիշեալ կրօններուն իրաւունքները պէտք է միշտ պաշտպանուած ըլլան Երուսաղէմի մէջ:

Լիբանանի Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն իր կարգին շեշտեց Լիբանանի կեցուածքը Երուսաղէմի դժով՝ նոյնպէս մերժելով Միացեալ Նահանգներու նախագահին յայտարարութիւնը:

Արամ Ա. կաթողիկոսին գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմէին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու առաջնորդ սրբազանները եւ պատուիրակութեանց ներկայացուցիչները:

**ԳՐԱԻՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ**

**«ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆԹՐԻՔ»**  
 Ի նպաստ Ազգային Առաջնորդարանին  
 Կիրակի, 4 Փետրուար 2018-ին, Թորոնթոյի Հայ Կեդրոն  
 Կիրակի, 11 Փետրուար 2018-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոն

**ՄՈՆԹՐԷԱԼ**

**ՀՕՄԻ «ՍՕՒԷ» մասնաճիւղի 60-ամեակ**  
 Կիրակի, 6 Մայիս 2018

**ԼԱԻԱԼ**

**ՀՕՄԻ «ՇՈՂԻ» մասնաճիւղի 25-ամեակ**  
 Շաբաթ, 29 Ապրիլ 2018

Լաւալի Հայ Կեդրոնի կազմակերպութեամբ  
**«Valentine»-ի Պարահանդէս**  
**Երգիչ Արմէնչիկ**  
**Շաբաթ 10 Փետրուար 2018**

**ՀՄԸՄ ԼԱԻԱԼ**

**Մարզական եւ Սկաւտական արձանագրութիւններ**  
 ամէն երեկոյեան ժամը 7-8  
**հեռաձայնել 514 979-6272 եւ 514 295-3245**  
 Homenetmen Laval Դիմատետրի (Facebook) էջով

**ՀՄԸՄ Գանատայի Շրջանի 48-րդ Մարզական Խաղեր**  
**Լաւալ 2018**  
**Նուիրուած ՀՄԸՄ-ի Հիմնադրութեան 100-ամեակին**

**ՄՈՆԹՐԷԱԼ**

**Համազգայինի վերանորոգուած «Մուշեղ Իշխան» գրադարանի**  
**ձմեռան ժամանակացոյց.-** Դեկտեմբեր, Յունուար եւ Փետրուար: Երեկոյեան  
 եւ Հինգշաբթի օրերը կ.ե. ժամը 12:00-4:00 իսկ Կիրակի օրերը առաւօտեան  
 ժամը 11:00-էն կ.ե. ժամը 2:00: Մոնթրէալի Հայ Կեդրոն, գետնայարկ, ՀՕՄ-ի  
 Ծաղկոցին կից,  
 514 337-7753: Գրադարանը բաց է գրասէր հասարակութիւնը գո-  
 հացնելու համար:

**ALINE BEKEREJIAN**  
 NOTAIRE • NOTARY  
**ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ԴԵՔԵՐԵՃԵԱՆ**

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Առաջին Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսավորում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest  
 Montréal, Qc, H3L1T5  
 T 514.382.7222  
 F 514.381.1818  
 aline.b@notarius.net  
 www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais  
 Services offered in Arabic, Armenian, French and English.

Շաբաթօրէին եւ կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website  
**www.arsarmenianschool.ca**

 Ս. ԳԵՈՐԳ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

**Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ**

**ԱՄԱՆՈՐ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻ**  
 Երկուշաբթի, 1 Յունուար 2018-ին  
 Ժամերգութիւն, կէս զիշերուան ժամը 12:00-ին

**ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԽԹՈՒՄ**  
 Ուրբաթ, 5 Յունուար 2018-ին  
 Ժամերգութիւն եւ ընթերցումներ, կ. ե. ժամը 5:00-ին  
 Ս. եւ Անմահ Պատարագ, կ. ե. ժամը 6:00-ին  
 Ս. Ծննդեան Աւետիսի շրջագայութիւն, ժամը 7:30-էն ետք

**Ս. ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ**  
 Շաբաթ, 6 Յունուար 2018-ին, Bon Pasteur եկեղեցոյ մէջ  
 Ս. եւ Անմահ Պատարագ, ժամը 12:00-ին  
 Զրօքնէք, կ. ե. ժամը 2:00-ին  
 Կը Պատարագէ եւ կը քարոզէ եկեղեցոյս հոգեւոր տեսուչ  
 Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեան

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ**  
 Կիրակի, 7 Յունուար 2018-ին, Bon Pasteur եկեղեցոյ մէջ  
 Ս. եւ Անմահ Պատարագ ժամը 12:00-ին  
 Հոգեհանգիստ, կ. ե. ժամը 1:30-ին

Զրօքնէքի առիթով կնքահայրութեան  
 փափաք ունեցողներէն կը խնդրուի հեռաձայնել  
 դիւանատուն 450-688-6795

 **ՀՕՄ-ի Սոնթրալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն**

ՀՕՄ-ի Սոնթրալի ընկերային ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Սոնթրալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներուն եւ ընտանիքներուն վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունեութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներուն աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներուն օժանդակութիւն:

- Կ'օգնենք դիւրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը:
- Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants:
- Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէնի դասընթացներու:
- Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ:
- Նոր ժամանած եւ տակաւին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր:
- La Corbeille գանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ զեղչուած գիներով ուտեստներ կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն:

**Զորքէջաբթի օրերը ժամը 12:00էն - 4:00**  
**Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5**  
**Հեռաձայն՝ 514 514-335-2222**

**horizon**  
**HORIZON**  
**Hebdomadaire arménien**  
**Armenian Weekly**  
 Publié par / Published by  
**Les Publications Arméniennes**  
**(1991)**  
 3401, Olivar-Asselin  
 Montréal, Québec  
 Canada H4J 1L5

**Abonnement annuel / Yearly subscription**  
**Canada**  
 2<sup>e</sup> classe - 2<sup>nd</sup> class: \$80 plus applicable taxes  
 1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95  
**États-Unis / USA**  
 1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95 US  
**Ailleurs / Elsewhere**  
 1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$125 US

**Administration / Publicité**  
 Sylva Eshramdjian-Bachekjian  
**(General Manager)**  
 Tél.: (514) 332-3757  
 Télécopieur/Fax (514) 332-4870  
 E-Mail: sylvia@horizonweekly.ca  
 Courrier de deuxième classe  
 /No. 40065294 / Second class mail  
 Dépôt légal: bibliothèques nationales  
 du Québec et du Canada - ISSN 0708580X

**Վարիչ Խմբագիր՝**  
 Վահագն Գարագաշեան  
**Վարչական պատասխանատու՝**  
 Սիլվա Պաշոգճեան  
**Քարտուղար՝** Մարինա Տէր Խաչատուրեան  
**Աագ խմբագիր՝**  
 Վրէժ-Արմէն Արքիմեան  
**Անգլերէն/Ֆրանսերէն՝** Վիգէն Արքա-  
 համեան, Թինա Սիլվանեան  
**Չեռատրում՝** Նէնսի Կիրակոսեան  
**Սրբագրիչ՝** Սոնա Թիթիկեան

**Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝**  
 Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921  
 Ժագ Վարպետեան, (416) 722-9225

**Լուսանկարիչներ՝** Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնթաշ

**Financé par le gouvernement du Canada**  
**Funded by the Government of Canada**

**Canada**

# ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Նոր ասպարեզներ պիտի բացուին դիմացդ այս շրջանին, զգոյշ եղիր սակայն, որովհետեւ անոնցմէ մէկ քանին անսպասու են: Բախտաւոր օրդ Երեքշաբթին է:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Դժուարութիւններով լի է շաբաթը, սակայն տօնական մթնոլորտը իր դրական ազդեցութիւնը պիտի ունենայ: Բախտաւոր օրդ Հինգշաբթին է:

ԵՐԿՈՒՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Նոր յարաբերութիւններ կը մշակես այս շաբաթ: Մի մտահոգուիր բնաւ, բոլորն ալ լաւ անդրադարձ պիտի ունենան: Բախտաւոր օրդ Ուրբաթն է:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Շուարած վիճակ մը ունիս, չես գիտեր, թէ ի՞նչ կ'ուզես, պարզապէս հանդարտէ՛ եւ ամէն ինչ լաւ պիտի ընթանայ: Բախտաւոր օրդ Երկուշաբթին է:

ԱՌԻԺ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Շատ յամառ ես, բայց լաւ կ'ըլլայ, եթէ քիչ մըն ալ կողակիցիդ կամ սիրեցեալիդ կարծիքը առնես, հաւանաբար ան աւելի իրաւացի ըլլայ: Բախտաւոր օրդ Կիրակին է:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Ձանձրացած վիճակ մը ունիս, նորութիւններ կ'որոնես շուրջդ, մի մտահոգուիր, մօտօրէն նոր դռներ պիտի բացուին դիմացդ: Բախտաւոր օրդ Չորեքշաբթին է:

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) - Խճողուած ես գործի հանդիպումներով, շուտով այս բոլորէն ձերբազատուելու ես, որպէսզի վայելես տօնական օրերը: Բախտաւոր օրդ Շաբաթն է:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Տօնական օրերը խանդավառութեամբ լիցքաւորած ես քեզ... զգոյշ սակայն շատ կը մսխես խնայած դրամներդ: Բախտաւոր օրդ Հինգշաբթին է:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Մտահոգուած ես ապագայովդ, մտահոգուելով բան չես կրնար փոխել, այլ փորձէ նոր ծրագիրներ մշակել: Բախտաւոր օրդ Ուրբաթն է:

ԱՅԾԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Գործի նոր առաջարկներ կան քեզի համար, հանդարտութեամբ մտածէ եւ արագ որոշումներ մի՛ առնէր: Բախտաւոր օրդ Երեքշաբթին է:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Վերիվայրումներու մէջ ես, հոգ չէ, կեանքի դժուարութիւններ են, կ'անցնին, համբերատար եղիր: Բախտաւոր օրդ Կիրակին է:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Շատ ամչկոտ եղեր ես, ուժերդ հաւաքէ եւ լրջօրէն մտածէ փոփոխութիւններու մասին: Նոր հորիզոններ կը բացուին դիմացդ: Բախտաւոր օրդ Չորեքշաբթին է:

## Սկիզբը էջ 1

տայ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Հռ. 6.23):

Այո, Աստուած Իր ամենաթանկ նուէրը պարգեւեց մարդկութեան՝ ճիւղաբար: Աստուծոյ տուած նուէրը հինը չէր, իր մը չէր, գաղափար մը չէր, այլ Իր անհուն սիրոյ գերագոյն Մտնուողը՝ Իր Միածին Որդին՝ մարմնացեալ ու մարդացած Յիսուս Մանուկը, որ Իր կեանքը պիտի ընծայարեիր մարդոց՝ անոնց փրկութեան համար. նուէր, որ օր մը աշակէս պիտի պատգամէր. «Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը զոհէ իր բարեկամներուն համար» (ՅՃ 15.13). նուէր, որ բառացիօրէն այսպէս պիտի բնութագրուէր՝ Աստուծային սէր-նուէրին շարունակութիւնն ու վերընձիւզումը, կենսաւորումն ու գոյաւորումը:

Աստուծոյ տուած նուէրը աստուածութեանն էր բխած՝ անձի տրուած նուէր ըլլալով հանգեւրձ, միաժամանակ եւ յաւիտենապէս տիեզերական նուէր է, որ ժամանակներէն վեր՝ յաւիտենական կեանք կու տայ աշխարհին, մեղքերուն քաւութիւն եւ թողութիւն՝ բոլորիս փրկութեան համար. «Ան է մեր մեղքերը քաւող Ձոհը, որ ինքզինք մատուցանեց՝ մեր մեղքերը սրբելու համար, եւ ոչ միայն մեր, այլ նաեւ ամբողջ աշխարհի մեղքերը սրբելու համար» (Ա.ՅՃ 2.2):

Մէկ խօսքով, Աստուած Քրիստոսով օրհնեց մեզ, քրիստոսական նուէրով հարստացուց մեզ, Առաքելային բառերով՝ «Իմով փրկուեցանք եւ Անոր արիւնով մեր մեղքերուն թողութիւն գտանք» (Եփ 1.7):

Արդարեւ մեզի տրուած մեծագոյն հրաշք-նուէրը՝ Փրկիչն է աշխարհի: Պատրաստ ենք ընդունելու գինք մեր կեանքին մէջ, պատրաստ ենք հաւատալու Անոր Ահաւասիկ, այս Մեծ Տօնին, իւրաքանչիւրիս ուղղուած հրաւերը, որպէսզի ճշմարտօրէն հասկնանք, որ «Ձինք՝ Քրիստոսը ընդունողներուն եւ Իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով» (ՅՃ 1.12-13):

Որքանո՞վ պատրաստ ենք եւ արժանի՞ ընդունելու մեծագոյն այս նուէրը՝ մանկացեալ Փրկիչը մեր մէջ, քաջ գիտնալով, որ նուէրը նաեւ արժանաւորութեան է կապուած:

Որքանո՞վ պատրաստ ենք տեսնելու եւ ճանչնալու Անոր փառքը, որ յաւիտեան է, եւ վերջապէս,

Որքանո՞վ պատրաստ ենք ստանալու այդ նուէրը, որ մեզ յաւիտենապէս պիտի կապէ Ընծայողին եւ Նուիրողին, Ընծայուողին եւ Նուիրուողին, յաւիտենապէս հարստանալու եւ հարստանցնելու մեր մեծ աշխարհը:

Այսօր այս մեծ խորհուրդին տօնն է, գոր ուրախ սրտով, բարի մտածումներով մենք՝ քրիստոնեաներս եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ գաւակներս կ'ապրինք. տօնը մեծագոյն Հրաշքի ծնունդին, անպատմելի Պարգեւին՝ մեր հզօր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Մննդեան:

Եկէ՛ք միասին երթանք մինչեւ Բեթղեհէմ, մոզերու նման երկրպագենք Անոր առջեւ ու տանք մեր սրտի գանձերէն ամենազնուագոյնը: Բայց նաեւ այդ երկրպագութեանն ստանանք աստուածապարգեւ ընծան՝ ամենաթանկ նուէրը՝ Աստուածորդիին սէրը, գայն տանելու իրարու, եւ աւետելու աշխարհին

Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս՝ Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ  
ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ  
2018

# Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Ց

\*\*\*\*\*

Ա Մ Ա Ն Ո Ր  
Երկուշաբթի, 1 Յունուար 2018  
ՄԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ  
Առաւօտեան ժամը 10:00-ին  
ՄԿԻԶԲ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ  
Ժամը 11:00-ին

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց  
Ուրբաթ, 5 Յունուար 2018  
ՄԿԻԶԲ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ  
Երեկոյեան ժամը 5:30-ին  
ապա  
ժամը 6:30-ին  
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Տօն Ծննդեան  
Յիսուս Քրիստոսի  
Շաբաթ, 6 Յունուար 2018  
ՄԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ  
Առաւօտեան ժամը 9:30-ին

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ  
Առաւօտեան ժամը 11:00-ին

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏԵՑԱԻ:  
ՁԵԶԻ, ՄԵԶԻ ՄԵԾ ԱԻԵՏԻՍ:

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ  
Յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի  
Կիրակի, 7 Յունուար 2018-ին  
Սկիզբ Պատարագի՝ ժամը 11:00-ին  
Սկիզբ Հոգեհանգիստի՝ ժամը 12:30-ին

\*\*\*\*\*

## ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրինէք փափաքող ընտանիքները  
թող բարեհաճին դիմել Հովիին  
Տ. Գառնիկ Ա. Բինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով 514 909 5203 թիւին:

Սիրելի հայրողի,  
Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան  
եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով,  
նուիրատուութեամբդ (Իւղագին) մասնակցէ  
եկեղեցւոյ առաքելութեան:

Կանխայայտ Ծնորհակալութեամբ՝  
ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Star Wars Les derniers Jedi © 2017 et ™ Lucasfilm Ltd.

STAR WARS  
LES DERNIERS JEDI  
EN SALLE LE 15 DÉCEMBRE



Innover  
pour exalter

LA VENTE DE FIN D'ANNÉE  
**MAÎTRE**  
DE LA ROUTE

GROUPE NISSAN  
**GABRIEL**

## ROGUE 2018

Location à partir de **282 \$** / mois sur 60 mois, avec 1 995 \$ en comptant initial, sur le Rogue S 2018 à traction avant.

C'EST COMME PAYER **65\$** / SEM.

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**, AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



AVEC SYSTÈME DE FREINAGE D'URGENCE INTELLIGENT AVEC DÉTECTION DE PIÉTONS\* DE SÉRIE



## ROGUE 2017

OBTENEZ JUSQU'À

**5 500\$\*** DE RABAIS

AU FINANCEMENT À UN TAUX STANDARD sur les Rogue 2017 en stock.

Rogue SL illustré\*



## MURANO 2017

OBTENEZ JUSQU'À

**4 500\$\*** DE RABAIS

AU FINANCEMENT À UN TAUX STANDARD sur les Murano 2017 en stock.

### BIEN ÉQUIPÉ

- SIÈGES REHAUSSÉS DE CUIR
- TOIT VITRÉ OUVRANT PANORAMIQUE



CONSULTEZ [NISSANGABRIELJEANTALON.COM](http://NISSANGABRIELJEANTALON.COM) OU [NISSANGABRIELANJOU.COM](http://NISSANGABRIELANJOU.COM) POUR PLUS DE DÉTAILS

**NISSAN**  
**GABRIEL**  
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8  
514 509-7777 | [nissangabrieljeantalon.com](http://nissangabrieljeantalon.com)

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

**NISSAN**  
**GABRIEL**  
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7  
514 324-7777 | [nissangabrielanjou.com](http://nissangabrielanjou.com)

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

\*Des conditions s'appliquent. Taxes en sus. Offre d'une durée limitée et applicable uniquement sur les modèles sélectionnés et sujettes à changements ou annulation sans préavis. Visitez votre concessionnaire Nissan Gabriel Jean Talon ou Nissan Anjou pour les détails.



BARRY



KAREN



GARO

# KAZANDJIAN



825 Avenue McEachran, Outremont

RÉCEMMENT  
**VENDU** 579 000 \$

2233 Rue Du Chinook, Saint Laurent

RÉCEMMENT  
**VENDU** 999 000 \$

514  
**333-3000**  
DEMANDEZ UNE EVALUATION GRATUITE

180 Avenue Morrison, Mont-Royal

RÉCEMMENT  
**VENDU** 2 999 000 \$

5819 Tommy-Douglas, Côte-Saint-Luc

RÉCEMMENT  
**VENDU** 999 900 \$

Lot on Boul. Gouin O., Ahuntsic

RÉCEMMENT  
**VENDU** 799 000 \$

8100 Av. Jean-Bourdon, Ahuntsic

RÉCEMMENT  
**VENDU** 1 899 000 \$

1189 Ch. Lucerne, Mont-Royal

RÉCEMMENT  
**VENDU** 699 000 \$

131 Ch. Bates, Mont Royal

PROJET DE CONDO  
**VENDU 100%**

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE  
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5